

ԲԱՄԲԱԿԻ ԱՐԳԻՒՆԱԲԵՐՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆ- ԳՈՒՄ

Գիւղատնտեսական ոչ մի ճիւղ այնքան առաջ չէ գնացել Երևանի նահանգում, որքան բամբակի մշակութիւնը, որը այսօր իր արտահանութեամբ կազմում է այս բազմամարդ և խիտ բնակուած նահանգի եկամուտի ամենամեծ աղբիւրը: Եւ իսկապէս արգիւնաբերական այդ ճիւղը կարող էր միանգամայն բարւոքել և ապահովել այդ նահանգի տնտեսական դրութիւնը, եթէ լուրջ ուշադրութիւն դարձնուէր զրա վրայ և մի քանի լուրջ ձեռնարկութիւններ հնարաւոր դարձնէին իր զարգացման աստիճանին հասցնել գիւղատնտեսական այդ պարագայունքը:

Ժիշտ է՝ բամբակի մշակութիւնը այժմ էլ առաջ է գնում տարէջտարի և աստիճանաբար ընդարձակուում է այն տարածութիւնը, որի վրայ մշակուում է բամբակ, բայց այդ առաջ է գնում չափ դժուարին պայմանների մէջ, և չափ անգամ գիւղացին սիրտ անելով այս կամ այն կտոր հողի մէջ բամբակի սերմ ձգել, յաճախ ջրի պակասութիւնից ամբողջ ցանքը չորանում է, և նա զրկուում է նոյնխիսկ այն եկամուտից, որը կը ստացուէր, եթէ ցորեն ցանէր այդ կտոր հողի վրայ:

Հասկանալի է, որ միմիայն ոռոգումից է կախուած բամբակադրծութեան զարգացումը Երևանի նահանգում:

Եւ իսկապէս՝ ջրի պակասութիւնը զգալի է ոչ միայն այն տարածութիւնների համար, որոնք այժմ էլ մշակուում են, այլև նահանգի դաշտավայրերում ընկած բազմաթիւ և ընդարձակ տեղերի, ինչպէս են Սարգաթաբատի մի քանի հազար ղեւեաւտին տարածութիւնը, Խոր-Վիրապի, Շարուրի և այլ տեղերի տափաբաղները, որոնք ոռոգումից զրկուած մնալով, աղանձուել և բուսականութիւնից միանգամայն զուրկ անապատի են փոխարկուել, սակայն որոնք արհեստական ջրանշնչների չնօրհիւ կարող էին միլիոնաւոր պուղբերով ամենաընտիր բամբակ արտադրել:

Յայտնի է, որ ամբողջ Ռուսաստանում երկու շրջաններ միայն բամբակ են արտադրում, այն է Անդրկասպեան երկիրը և Անդրկովկասը:

Անդրկովկասում երեք նահանգներ միմիայն մշակում են բամբակ, այն է՝ Բաղուն, Գանձակը և Երևանը, առաջին երկուսը միասին վերջրած աւելի քիչ են արտահանում,

քան Երևանը միայն: Այսպէս համաձայն 1903 թւի «Кавказский календарь»-ի առաջ բերած թւերի, 1901 թւին արտահանել է՝

Բազուի նահանգը	45,000	պուղ
Գանձակի »	105,633	»
Երևանի »	319,747	»

Եւ չր պէտք է մոռանալ, որ այդ թւին Երևանի նահանգում բերքը եղել է անյաջող, ինչպէս այդ կը տեսնենք մի փոքր յետոյ:

Բազուի և Գանձակի նահանգներում վաղուց չէ, որ սկըսուել է բամբակի մշակութիւնը, ինչպէս և Ղարաբաղը Թիֆլիսի նահանգում, որը չնորհիւ Մարենեան ջրանցքի շուտով կարող է բամբակի մշակութեան մի յարմար չրջան դառնալ:

Գալով Երևանի նահանգին, այստեղի ժողովուրդը բամբակի մշակութեան հետ ծանօթ է չառ վաղուց:

1827 թւին ուսաները տիրելով Երևանին՝ այս և այն տեղում գտան ամբարած մեծ քանակութեամբ բամբակներ, որոնք պատկանում էին մշակող դասակարգին, վաճառականներին և Հուսէին-խան սարգարին: Վերջինը բամբակը վերցնում էր հարկերի փոխարէն՝ որպէս տասանորդ տուրք: *)

Սակայն մինչև այդ՝ բամբակի մշակութիւնը գտնուում էր իր զարգացման ամենաստոր աստիճանի վրայ: Մշակողները հող չէին տանում տեսակների ընտրութեան վրայ, թերևս զաղափար չ'ունէին բամբակի լաւ տեսակի մասին, այդ պատճառով էլ նա չէր արտահանւում, այլ ամենաշատը տարածւում էր մի սահմանափակ չրջանում՝ ծառայելով որպէս նիւթ սնայնագործութեան և գլխաւորապէս ձեռագործ կտաւների համար, որ մի ժամանակ չառ ծաղկած էր մեղանում, ինչպէս այժմ Պարսկաստանի մի քանի կողմերում, ինչպէս իմոյում, Սալմաստում եւ այլն:

Բամբակագործութեան զարկ տալու փորձեր առաջին անգամ տեղի ունեցան 40-ական թւականներին, իշխան Վորոնցովի փոխարքայութեան ժամանակ, թէև անհետևանք: Նրանից յետոյ թէ կառավարչական չրջաններում և թէ մասնաւոր մարդկանց կողմից ջանքեր էին լինում զարգացնել գիւղատնտեսական այդ ճիւղը: Այս բանին առանձնապէս մեծ զօրկ տուեց Մոսկուայի Սաւվա Մորոզովի գործարանը, որը 1884 թ. Ամերիկայից սերմ բերել տալով՝ բաժանեց գիւղացիներին, որից յետոյ

*) Այս տեղեկութիւնները մենք քաղում ենք «Памятная книжка Эриванской губ. на 1902 г.» պաշտօնական հրատարակութիւնից:

չօշափելի չափով սկսեց ծաղկել ամերիկական տեսակի բամբակը ի վրաս տեղական զարադողայի, որը շատ կողմնուով ցած է առաջինից: Այդ նոյն թւականին Երևանի նահանգը ուղարկուեց գիւղատնտես Ամադուկանի, որը բամբակագործութիւնը ուսումնասիրել էր Ամերիկայում:

Բամբակի մշակութիւնը, նրա հետ միաժամանակ նաև արտահանութեան գործը՝ մեծ զարկ ստացաւ առանձնապէս 1886 թւից, երբ սկսեցին Երևան ոտը դնել Մոսկուայի և Լոդպի մի քանի յայտնի ֆիրմաներ, ինչպէս են՝ Կորզինկին, Ալեքսէն, Պողոսեանի կալըն, որոնք նահանգի մի քանի կենտրոններում հիմնեցին բամբակ մաքրելու մեքենաներ, որը մեծ առաւելութիւններ ունէր տեղական սիստեմի անդամայոյթ մի գործիքից: Թէ ժամանակի խնայողութեան և թէ մաքրելու տեսակէտից: Գնած բամբակը սկսեցին մեծ ուշադրութեամբ տեսակների վերածել, և այնպէս արտահանել, մինչդեռ տեղայի վաճառականները մինչև այդ ոչ մի ուշադրութիւն չէին դարձնում այդ կարևոր հանգամանքի վրայ, և շնորհիւ նրանց անխոյժ վերաբերմունքի, Երևանի բամբակը գնահատուում էր շատ էժան: Բացի այդ՝ առևտրի մէջ էլ կանոնաւորութիւն մտաւ շնորհիւ նրան, որ ֆիրմաները իրանք ներկայանալով որպէս գնողներ, չէզոքացան այն աննպաստ հանգամանքները, որոնք անխուսափելի կերպով գոյութիւն ունէին աւելորդ ձեռքերի և միջնորդների շնորհիւ: Գները նոյնպէս կանոնաւորուեցին Երևանի շուկայում համապատասխան Մոսկուայի գների, մինչդեռ տեղայիները յաճախ մինչև այդ խօսքները մէկ արած՝ արհեստական կերպով գցում էին գները՝ մեծ չափով օգտուելով մրցման բացակայութիւնից:

Թէ ինչ չափով է աճել բամբակի մշակութիւնը, այդ երևում է նրանից, որ 1880 թւականին ստացուել է 81,084 պ. և ներկայ սեզոնի բերքը:

Ներկայ սեզոնում հետեւեալ ֆիրմաները գնել են հետեւեալ քանակութեամբ բամբակ.

Պողոսեանի	14,000	հալ	—	կամ	175,000	պուղ
Գէորգեան Եղր. միասին	12,000	»	—	»	150,000	»
Կորզինկին	8,000	»	—	»	100,000	»
Գիրշերց	6,000	»	—	»	75,000	»
Եղիազարեան	3,000	»	—	»	37,500	»
Այալար-Շահ	1,500	»	—	»	18,750	»
Զենեկիկեր	1,300	»	—	»	16,250	»
և Զանազան	4,200	»	—	»	52,500	»
	50,000				625,000	»

որից, եթէ հաշուելու լինենք, մի 25,000 նոյնիակ 30,000 պ. ներմուծած Պարսկաստանից, այնուամենայնիւ այս տարուայ բերքը մօտ 600,000 պ. կը լինի:

Եւ եթէ վերցնենք նոյնիակ 550,000 պուդ, ոչ 600,000 և այս սեզոնում գոյութիւն ունեցեղ գնեցը, կը տեսնենք որ այս տարի Երևան բամբակի արտահանութիւնից մօտ է 550,000 $\times$ 11 բուր. = 6,050,000 բ. փոզ, մի գումար, որը չի մտնիլ միւս բոլոր բերքերի արտահանութիւնից միասին վերցրած:

ԳԻՆՈՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇՏԵՄԱՐԱՆՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇ-ՏՈՒԹԻՒՆԸ ԵՐԵՒԱՆԻ ՆԱՀԱՆԳՈՒՄ

Երևանի նահանգի այն մագերում, ուր ժողովուրդը մեծ մասամբ պարապում է այգեգործութեամբ և տարէցտարի աւելոյցնում է խաղողի վազերի պլանտացիաները, ինկատի ունենալով կոնիակի գաւառների բազմաձևը և նրա հետ միաժամանակ զինու մեծ պահանջը, առաջ է եկել մի հարց, որը կենսական նշանակութիւն ունենալով ժողովրդի համար՝ պահանջում է բաւարար լուծում:

Երևանի նահանգի երկու գաւառներում, առանձնապէս այդ գաւառների զաշտային և տաք կլիմա ունեցող տափարակ մասերում ժողովուրդը պարապում է քիչ քաջառութեամբ այգեգործութեամբ: Թւերով խօսենք:

1900 թ-ի Երևանեան նահանգի խաղողի այգիների բոնած 10298 դեռեատին տարածութեան 5448-ը հաշուած է միմիայն Երևանի գաւառում, իսկ 300—էջմիածնի գաւառում. եթէ ընդունենք, որ այդ տարածութիւնը իր աճեցողութեան այժմեան չափով³ տարուայ ընթացքում մեծացել է մի-չորրորդ մասով կամ նոյնիակ մի հինգերորդականով, մենք կը ստանանք մօտ 10,000 դեռեատին տարածութիւն, որը բոնուած է խաղողի այգիներով և որը ընկած է երկու, այն է Երևանի և էջմիածնի գաւառների՝ այն էլ յայտնի՝ չրջաններում: Հասկանալի է որ այդ չրջաններում ժողովրդի գլխաւոր և նոյնիակ միակ պարապմունքն ու ապրուստի միջոցը կազմում են խաղողի այգիները. մանաւանդ որ այդ տեղերում ազդարնակութիւնը չատ խիտ է բնակուած, և զգալի է հողի մեծ պակասութիւն:

Այգայիսի չրջաններ կարելի է թւել էջմիածնի գաւառում Ղզլթամուրի և Վաղարշապատի հասարակութիւնները պոլի-յիակոն առաջին մասում, Ղուրդուղուլիի, Սարգարաբատի և